

0 120-1A

ՀԻՍՅ ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

398.5

Ճ-98

47

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՒԿԱԼՈՒԻ

ԵՐԵՎԱՆ



398.5

Ճ

398.5
Ճ-98

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1940

11 5 MAY 2013

56774

Հաստատված է ՀԽՍՀ
Լուստողիտի կողմից
փետրվարի 11-ին 1940 թ.

Ժ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԻ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առարկայի անունը: Հին անուններ (քանավոր գրականու-
թյուն», «անդիր դարություն», «ժողովրդական բանասյուսու-
թյուն» և այլն): Նոր անուններ («Ֆոլկլոր», «ժողովրդական
ստեղծագործություն» և այլն): Դրանց բնույթը:

Գիտական դիսցիպլինը և առարկայով զբաղվողները: Բանա-
գիտություն (ֆոլկլորիստիկա), բանասավաք, բանագետ: Դրանց
բացատրությունը:

Բանագիտության կապը հարակից դիսցիպլինների հետ: Գրա-
կանագիտություն, աղագրություն (եթնոգրաֆիա), պատմու-
թյուն, բարբառագիտություն և այլն: Բանագիտության՝ հիշյալ
դիսցիպլիններից յուրաքանչյուրի հետ ունեցած կապի բնույթն
ու՝ ելությունը:

Ժողովրդական բանահյուսության հասարակական ելությունը:
Աշխատավոր ժողովրդի դասակարգային պայքարի, իր ձեռքի ու
վոգորումների արձագանքը ֆոլկլորի մեջ:

Ժողովրդական բանահյուսության հորիզոնը ու տարածումը:
Ֆոլկլորը վորպես ծագումով անհատական և բնույթով հավաքա-
կան (կոլեկտիվ) ստեղծագործություն:

Խորհրդային բանագիտության հիմունքները: Խորհրդային
բանագիտությունն իբրև մարքսիստական գրականագիտության
կարեկիտ մարդերից մեկը: Մարքս-լենինյան ուսմունքը ֆոլկլորի
մասին:

Մարքսը, Ենգելսը, Լաֆարգը, Լենինը, Մտալինը ժողովուր-
դական ստեղծագործության մասին:



2855
40

Խմբագիր՝ Հ. ԹՈՒՄՅԱՆ,
Տեխ. խմբ. Խ. ԽՊՁԱՏՐՅԱՆ,
Մրցադրիչ՝ Կ. ԳԵՏՐՈՍՅԱՆ,
Գլավխտի լիազոր՝ Ա.—182, Պատվեր 72, տիրամ 2500
Հանձնված է արտատրության 11 փետրվարի 1940 թ.
Կտրագրված է տպագրության 3 մարտի 1940 թ.

Ակադ. Ն. Յա. Մատի և Ա. Մ. Գորկու ասույթ-գիտությունների ֆոնդի ֆոնդի մասին:

ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ ՅԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) Անասպելաբանական դպրոց (Գրիմի յեղբայրներ): Ժողովրդական բանահյուսություն մի քանի կարևոր տեսակների նախնադարյան առասպելների քայքայումից առաջնախուռ և հնգյեկերոսպոստիների յենթադրյալ նախահայր՝ արքայական ժողովրդից ստացած ֆոլկլորային ժառանգություն մասին:

բ) Փոխառությունների դպրոց (Բենֆեյ): Արևելքը և մասնավորապես Հնդկաստանը՝ համաշխարհային ֆոլկլորի, առակների ու հեքիաթային սյուժեների միակ աղբյուր: Հնդկական հեքիաթների միջրացիան (միջազգային փոխանակություն) և Խաչակրաց արշավանքների դերն այդ գործում:

գ) Պատմա-համեմատական դպրոց (Վ. Միլլեր): Ժողովրդական ստեղծագործության (մասնավորապես ժող. վիպի) սյուժեների, գործող անձանց և այլն նախվ-սեպարատական նույնացումը բուն պատմական իրականություն հետ:

դ) Ֆոլկլորային ուղղություն (Շկլյուսկի): Ժող. բանահյուսություն ուսումնասիրության ժամանակ՝ իբրև կենտրոնական մոմենտ՝ նրա եստեմիական մեկնաբան հարցի արակշքաշումը:

ե) Գեհեիկ-սոցիոլոգիական ուղղություն (Բ. Սոլյալով): Ժող. բանահյուսություն մի քանի կարևոր տեսակների ստեղծման վերագրումը տիրող ֆեոդալական դասակարգերին:

Վերահիշյալ դպրոց-ուղղությունների ֆենագատությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գ. Մարքս, Բաղաբանականության քննադատության շուրջը, Յերևան, 1932 թ., էջ՝ 77—58:
2. Ա. Մ. Գորկի, Խորհրդային գրականության մասին: Չեկոցում խորհրդային գրողների համամիութենական առաջին համագումարում, Յերևան 1934 թ., էջ՝ 9—22, 31—34 և հավ:
3. Проф. И. П. Андреев, Русский фольклор, хрестоматия для высших педагогических учебных заведений, изд. второе переработанное, Москва 1933 Ленинград, էջ՝ 25—42.

4. Проф. Ю. М. Соколов, Русский фольклор, учебник для высших учебных заведений, Москва, 1932, էջ՝ 5—121:

II.

Հայ ժողովրդական բանահյուսության հավաքումը և ուսումնասիրությունը

ա) Ժողովրդական բանահյուսություն վերաբերյալ մի շարք աերմինների հիշատակությունը հայ հին մատենագիրների (Մ. Խորենացի և ուրիշները) մոտ:

բ) Հայ մի քանի հին հեղինակները (Մ. Խորենացի, Փ. Բյուզանդ, Գ. Մաղիսարոս և ուրիշները) գործերում պահպանված ժողովրդական բանահյուսություն հնագույն նմուշներն ու պատասխիկները (բառացի կամ գրական մշակմամբ):

գ) Հայ ժողովրդական բանահյուսություն (արձակ և չափածո) նմուշների մոտաքը միջնադարյան տաղարանները («Նախերեններ») ու առակների ժողովածուները (առակներ):

դ) Առաջին հայ բանահավաքը (Ս. Արթուրյան):

ե) «Բաղմավեպ»-ի ահազանգ-կոչը (1843 թ.) ժողովրդական բանահյուսություն նմուշների հավաքագրման անհրաժեշտություն մասին:

զ) Մ. Եմինի և Հ. Գաթրճյանի գրքերը (1850—1851 թ. թ.) Մ. Խորենացու հայոց պատմության մեջ յեղած բանահյուսական նյութերի մասին:

է) Պարբերական մամուլի («Բաղմավեպ», «Կովկաս», «Արծվի Վասպուրական», «Մեղու Հայաստանի» և այլն) եջերում յերեվացող ժող. բանահյուսություն նմուշները (50-ական, 60-ական թվեր):

ը) Ժողովրդական բանահյուսություն նմուշների մոտաքը ժամանակակից «Ազգային յերգաբան»-ժողովածուները (Ղ. Ալիշանի «Ռամկական երգը Հայոց»-ը 1852 թ. և Մ. Մխանսարյանի «Քնար հայկական»-ը 1868 թ.):

թ) Գ. Սրվանձադյանը և նրա ժողովածուները («Կրոց բըրոց», «Մանանա», «Համով Հոտով», 1834—1884 թ. թ.):

ժ) Գ. Սրվանձադյանի հետևորդ և ժամանակակից բանահավաքները տոճկահայերի (Ա. Սեդրակյան, Ճուլարյան, Գ. Շե-

հայրենի Ա.

րենց և ուրիշները) և ուսանայիցի (Տ. Նավասարդյան, Գ. Տեր-Աղեքսանդրյան և ուրիշները) մեջ և նրանց ժողովածուները: ժա) Նոր վերելք (90-ական թվականներ) ժողովրդական բանահյուսության հավաքման և ուսուցնասիրման բնագավառում (Մ. Աբեղյան, Յե. Լալայան, Գ. Հովսեփյան, Հ. Ճանիկյան և այլն):

ժբ) Բանահյուսական-ազգագրական հատուկ պարբերական հանդեսները հիմնադրումն ու գործունեությունը 900-ական թվականներից («Ազգագրական Հանդես», «Բյուրակն», «Եմինյան ազգագրական ժողովածու»): Հիշյալ և մի շարք այլ պարբերականներում հրատարակված բանահյուսական հարուստ նյութերը (Ս. Հայկունու, Յե. Լալայանի և այլոց ժողովածուները) և ուսուցնասիրությունները (Մ. Աբեղյան, Ստ. Կանայան, Բ. Սալաթյան և այլն):

ժգ) Ժողովրդական բանահյուսության նյութերը հավաքագրումը և ուսուցնասիրությունը Հայաստանի խորհրդայնացումից հետո («Գիտության և արվեստի», «Կուլտուրայի պատմության», «Պատմության և գրականության», Արմֆանի «Գրականության և լեզվի» ինստիտուտների, Պետհրատի, ժողովրդական ստեղծագործության տան, Ռ. Մելիքյանի անվան յերաժշտագիտական կաբինետի և այլն աշխատանքները):

Բ.

ՀԱՅ ԺՈՂ. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԵՐԸ

ա) Եպիկական (վիպական) ժանր.—Արձակ և չափածո վիպական ստեղծագործություններ (առասպել, զրույց, հեքիաթ, ավանդություն, վեպ, վիպերգ և այլն):

Մանր-եպիկական ստեղծագործություններ.—Առած, ասացվածք, անեծք, որհնանք, հանելուկ, շուտասելուկ և այլն:

բ) Լիրիկական (էնաքական) ժանր.—Ժողովրդական յերգերի այլ և այլ տեսակներ (աշխատանքի, սիրո, հարսանեկան, պարի, պանդխտության, սգո, զինվորական, վորբերի, յերգիծական, մանկական և այլն):

գ) Դրամատիկական (թատերական) ժանր.—Դրամատիկական

ստեղծագործություններ (ժող. խաղեր և այլն) և դրամատիկա-տարրեր (գիլոգ-յերկախսություն) հայ ժողովրդական բանահյուսության տարրեր տեսակներում (վեպ, առակ, հարբան, առած և այլն):

Գ.

ՎԻՊԱԿԱՆ (ԵՊԻԿԱԿԱՆ) ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) Ժողովրդական առասպելներ.—Մ. Խորենացու պատմության մեջ պահպանված առասպելները («Հայկ և Բել», «Վահագն», «Տորք Անդեղ», «Արտավազդ», «Արա դեղեցիկ և Շամիրամ»): Վերջիններիս ժողովրդական-բանահյուսական ստեղծագործություն լինելու հարցը: Հայ ժողովրդական առասպելների հոսթյունը: «Հայկի և Բելի», «Վահագնի» և ժյուս առասպելների գիցարանական-դյուցազնական էությունը: Նրանց պատմականանալու ինչպիսիք: Հայ ժողովրդի և նրա նախնիքների (խաղեր) բնության տարբերքի և ստարերկրյա նվաճողների (ասորեստանցիների) դեմ մղած պայքարի արտացոլումը այդ առասպելներում:

բ) Պատմա-առասպելական վեպեր ու յերգեր.—Մ. Խորենացու և Գ. Մալխասրոսի գործերում պահպանված հայոց հնագույն պատմա-առասպելական վեպերն ու յերգերը («Աբուտաշես և Սաթենիկ», «Տիգրան և Աժգահակ»): Պատմա-առասպելական վեպերի և յերգերի տարբերությունը բուն գիցարանական-դյուցազնական առասպելներից: Դրանց հորինման ժամանակը և պատմական, կենցաղային կողմը: Հոտմեական, մեղական և այլ նըվաճողների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի արտացոլումը պատմա-առասպելական վեպերի և յերգերի մեջ:

գ) Ժողովրդական գրույցներ.—Փ. Բյուզանդի, Ագաթանգեղոսի գործերում պահպանված ժողովրդական գրույցները («Տիրան և Շապուհ», «Արշակ և Շապուհ», «Վասակ և Շապուհ», «Անդոկ-Բաբիկ և Շապուհ», «Վախտանգ և Սմբատ», «Վարազաբուր» և այլն): Վերոհիշյալ գրույցների հորինման ժամանակն ու պատմական ատաղձը: Պարսից նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի արտացոլումը խնդրի առարկա գրույցներում:

Հայ ժողովրդական առասպելների, պատմա-առասպելական

վեպերի ու յերգերի և գրույցների լեզուն ու արվեստը:

դ) Ժողովրդական հեքիաթները (կախարդական կամ հրաշապատում, ռեալիստական-կենցաղային, կենդանական, ավանդական և այլն): Վերջիններիս բովանդակությունն ու արվեստը (թեմատիկա, կոմպոզիցիա, վճռ և այլն): Աշխատավոր հայ ժողովրդի իրենցիկ ու ակնկալությունների արձագանքը հեքիաթներում:

ե) Ժողովրդական վեպ («Սասունցի Դավիթ»): Վեպի անվան հարցը (բուն ժողովրդական և գրական հորջորջումներ): Վեպի բնագրերի (վարիանտների) գրանցման պատմությունը: Վեպի աշխարհագրական տարածումն ըստ գրառված պատմիկների: Վեպի ճյուղերը (ըստ սերունդների և առանձին վիպական հատվածների): Պատմիչների վկայությունները դրանց մասին: Վեպի ճյուղերի անկախ կյանքը: Վեպի առանձին ճյուղերի հորինման ժամանակն ու կապը իրար հետ: Ճյուղերի բովանդակությունը: «Սասունցի Դավիթ» պատմական ատաղձը (7-10-րդ դարերում, արարական տիրապետության շրջանում-Հայաստանում տեղի ունեցած դեպքերի-հարկահանություն, ճնշում, ժողովրդական ապստամբություններ և այլն և դեմքերի արձագանքը վեպում):

«Սասունցի Դավիթ» աշխարհագրական միջավայրը (Հայաստանի և մասնավորապես Սասունի ու նրա հարևան զավառների ու յերկրների տեղագրական-աշխարհագրական միջավայրի արձագանքը վեպում): «Սասունցի Դավիթ» իրենցական բովանդակությունը (հայրենասիրություն-ժողովրդասիրություն, ազգային համերաշխություն և խաղաղասիրություն, ազատասիրություն, լավատեսություն...): «Սասունցի Դավիթ» կենցաղային կողմը (աշխատավոր հայ գյուղացու և մասնավորապես սասունցիների կենցաղի, նիստ ու կացի, սովորույթներ, հավատալիքներ, աշխատանքային-արտադրական կյանքի արձագանքը վեպում): «Սասունցի Դավիթ» դիցաբանական կողմը (առասուլիս լական, հեքիաթային սյուժեներ ու մոտիվներ):

«Սասունցի Դավիթ» գեղարվեստական կողմը (սյուժեն, տիպերը, կառուցվածքը, ռեալիզմը, դինամիզմը, լեզուն, վճռը, մակրիլիկն ու ածականները, պատկերներն ու համեմատությունները, կոմպոզիցիա և հիպերբոլա, տաղաչափական կառուցվածքը

և այլն): «Սասունցի Դավիթ» պատմիչների կյանքն ու ստեղծագործությունը (սոցիալական ծագում և տնտեսական դրություն, գրադմունք և մասնագիտություն: Պատմիչների անհատական-ստեղծագործական աշխատանքը վեպի բնագրի բովանդակության ու արվեստի մշակման գործում: Պատմիչների պատմական մեծ ծառայությունը մեր ժողովրդի կուլտուրայի համար): «Սասունցի Դավիթը» և հայ հին գրականությունը: «Սասունցի Դավիթը» հայ նոր և նորագույն գրականության մեջ (մշակումներ, փոխադրություններ և այլն): «Սասունցի Դավիթը» հայ նկարչության, յերաժշտության և կինոյի մեջ: «Սասունցի Դավիթ» 1000-ամյակի հորեկյանական Համաժողովենական տոնակատարությանը: «Սասունցի Դավիթ» պատվավոր տեղը աշխարհի լավագույն ժողովրդական վեպերի (եպոսների) շարքում):

զ) Ժողովրդական վեպ («Ռոստամ-Ջալը»): «Ռոստամ-Ջալը» իբրև իրանական ժողովրդի ազգային եպոս: «Ռոստամ-Ջալը»-ի տեղը հայ վիպական բանահյուսության մեջ: «Ռոստամ-Ջալը» հայերեն վարիանտները: Իրանց բովանդակությունն ու արվեստը: «Ռոստամ-Ջալը» հայ պատմիչների բանահյուսական ռեպերտուարի սիրելի ստեղծագործություններից մեկը դառնալու պատմական-հասարակական պատմանը: «Ռոստամ-Ջալը» ստեղծագործական վերամշակումը հայ պատմիչների կողմից:

է) Ժողովրդական վեպ («Քյոթր-Ողլին»): «Քյոթր-Ողլին» իբրև Մերձավոր Արևելքի ժողովուրդների վիպաաշխարհի սիրված ու տարածված ստեղծագործություններից մեկը: «Քյոթր-Ողլու» տեղը հայ ժողովրդական պատմիչների ու աշուղների բանահյուսական ռեպերտուարում: «Քյոթր-Ողլու» հայկական պատմիկների բովանդակությունն ու արվեստը: «Քյոթր-Ողլու» գրական մշակումները (Ղ. Աղայան, Ռ. Պատկանյան):

ը) Վիպական յերգեր («Մոկաց Միրզա», «Ասլան Աղա», «Նարեկացի», «Կարոս Խաչ», «Ալեքսիանոս»):

Ժողովրդական վիպական յերգերի տեղը հայ վիպական բանահյուսության մեջ: Վիպական յերգերի յերկու տիպերը (աշխարհիկ և կրոնական): Վիպական յերգերի բովանդակությունն ու արվեստը: Վիպական յերգերի իրենցական բովանդակության

ու արվեստի (արտահայտչական միջոցների) տարբերությունը վեպից: Վիպական յերգերի գրական մշակումները (Հ. Շիրազ, Մ. Թերանյան, Հ. Շիրոյան):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

I. Բ Ն Ա Գ Ր Ե Ր

1. Մ. Խարենացի. Պատմութիւն հայոց (գրարար), վորևե հրատարակութիւն: Նույնը՝ աշխարհարար, Խ. Ստեփանեյի թարգմանութեամբ.
Գիրք Ա. գլուխ՝ Ժ, ԺԱ, ԺԲ, ԺԸ, ԽԴ—ԼԱ.
» Բ. » Ը, ԼԶ—ԿԲ:
2. Փ. Բիւզանդ. Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1913 թ.
Դպրութ. Գ., գլուխ՝ Բ, էջ՝ 76—83.
» Է, » ԾԴ, էջ՝ 250—255—257:
3. Յե. Էալայան. Մարգարիտներ հայ բանաստեղծութեան, Ա. գիրք:
4. Ս. Հայկաւանի. Ժողովրդական առակներ, Եջմիածին, 1917 թ.:
5. «Սասունցի Դավիթ». Հայկական ժողովրդական եպոս, Յերևան 1939 թ.:
6. Գ. Հովսեփյան. Ռոստամ Զալ, ժողովրդական վեպ (Մոկայ բարբառով),
«Ազգագրական հանդես», 1907 թ. գիրք XIII:
7. Գ. Հովսեփյան. Փղթանքներ ժողովրդ. բանաստեղծութեան Թիֆլիս, 1893 թ. էջ՝ 3—20:

II. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐ ՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մ. Արեղյան. Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմութեան մեջ, Վաղարշապատ, 1901 թ.:
2. Մ. Արեղյան. Հայ ժողովրդական վեպ, Թիֆլիս, 1908 թ. (արտատրպ. «Ազգ. Հանդ.» 13—18-րդ գրքերից):
3. Ա. Ղանալանյան. Սասունցի Դավիթ, Հայ ժող. վեպ, Յերևան 1939 թ.:
4. Գ. Հովսեփյան. Ռոստամ Զալ (Ուսումնասիրութիւն), Թիֆլիս 1905 թ.:

ՔՆԱՐԱԿԱՆ (ԼԻՐԻԿԱԿԱՆ) ՍՏԵՂԾԱԿՆԵՐԻ ՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ

ա) Աշխատանքի յերգեր. Աշխատանքի յերգերն իբրև հայ ժողովրդական բանաստեղծութեան ամենահին տեսակներից մեկը: Աշխատանքի յերգերի յենթատեսակները (դաշտային, տնային, տնայնագործական): Աշխատանքի յերգերի բովանդակութիւնը (սոցիալական մոտիվների, աշխատանքի գործիքների և աշխատող անասունների գովք, աշխատավոր մարդը, ժողովրդական հավատալիքներ և կենցաղ): Աշխատանքի յերգերի մեղոգիան ու ռիթմը:

բ) Սիրո յերգեր. Սիրո յերգերն իբրև հայ ժողովրդական բանաստեղծութեան ամենագնաբնույթ ու գունեղ տեսակներից մեկը: Հին գուսանական-ժողովրդական «ուրախութեան» յերգերն իբրև սիրո յերգեր: Սիրո յերգերի յենթատեսակները (տղամարդու, կնոջ, սիրային յերկախոտութիւններ): Սիրո յերգերի բովանդակութիւնը (սեք, խանդ, ամուսնութիւն, բաժանում, կնոջ և տղամարդու արտաքինի գովք, կենցաղային, սոցիալական և այլ մոտիվներ):

գ) Հարսանեկան յերգեր. Հարսանեկան յերգերն իբրև հայ ժողովրդի հնագույն ծիսական յերգեր, Հարսանեկան յերգերի յենթատեսակները («Թագվորի գովք», «հարսի գովք»): Հարսանեկան յերգերի բովանդակութիւնը (հարսանեկան անարողութիւնների արդ ու զարդի և այլն նկարագիր, աղջկա մոտրմաններն ու ապրումները, կնոջ կենցաղային և իրավական գրութեան նկարագիր, սոցիալական-սատիրական մոտիվներ և այլն): Հարսանեկան յերգերի յերանակները (հանդիսավոր-ուխիզող, տխուր և ուրախ պարերգային):

դ) Ժողովրդական պարերգեր. Հայ ժողովրդական պարերգերի սկզբնական թովչական-ծիսական բնույթը (յերկրագործական տոներին և այլն գուգակցող պարերգեր): Աշխատանքային պարերգերն իբրև հայ ժողովրդական պարերգերի հնագույն նմուշներ: Ժող. պարերգերի համակցումը սիրո, հարսանեկան և այլն յերգերի հետ: Նրանց բովանդակութիւնը (սիրո, կենցաղա-

յին, սատիրական, սոցիալական և այլն մոտիվներ): Պարերգների յեղանակն ու ռիթմը:

ե) Սգո յերգեր. Փ. Բյուզանդի, Մ. Խորենացու և այլն վերջու-
թյունները ժողովրդական սգո («լալիքի») յերգերի մասին: Սգո
յերգերի սկզբնական թովչական բնույթը: Սգո յերգերի հարի-
նողներն ու կատարողները («ձայնարկու գուսանք», «աշխատող
կանայք»): Սգո յերգերի բովանդակութունը (այբերիներն ու վոր-
բերի ծանր վիճակի նկարագիր, անհատական վիշտ ու ցավի
նոտաներ, սոցիալական մոտիվներ): Սգո յերգերի մեղոգիան:

զ) Պանդխտի յերգեր. Պանդխտի յերգերի առաջացման ժա-
մանակն ու սոցիալ-տնտեսական հողը: Պանդխտի յերգերի տե-
սակները: Պանդխտի յերգերի բովանդակութունը (հայրենիքի
կարոտ, ծանր աշխատանք ոտարության մեջ, տանեցիկների ան-
հրապույժ դրության նկարագիր և այլն): Պանդխտի յերգերի
յեղանակները:

է) Զինվորի յերգեր. Հայ ժողովրդի սակզած հին ու նոր
(1878 թ. ուսու-տանական պատերազմի, 1914—1916 թ. թ.
լուսաբերության կռվի շրջանի) պինդորի յերգերը: Զինվորի
յերգերի տեսակները (զինվորի, սաղմի...): Զինվորի յերգերի
բովանդակութունը (զորակոչ, հրաժեշտ, զինավառում, զորանո-
ցային կյանք, պատերազմի դաշտ, անեծք ու պարսավանք պա-
տերազմի հրձիգների հասցեյին, սոցիալական մոտիվներ): Զին-
վորի յերգերի խորը լիրիզմը:

ը) Վորբի յերգեր. Վորբի յերգերն իրրև հայ ժողովրդի անցյալի
անլուսաշող կյանքի կենդանի ու խոսուն վավերագրեր: Վորբի
յերգերի բովանդակութունը (զանգատ դառն ճակատագրից,
վորբանոցային կյանք ու կենցաղի նկարագիր, ծնող-հարազատ-
ների ու հայրենիքի կարոտ և այլն): Վորբի յերգերի յեղա-
նակները (մեկամաղձիկ ու տխուր մեղոգիաներ):

թ) Մանկական յերգեր. Մանկական յերգերի տեսակները
(դպրոցի, ձեռնպատի և բուն մանկական յերգեր): Մանկական
յերգերի բովանդակութունը (մոր ցանկություններն ու մաղ-
թանքները յերիխայի ապագայի վերաբերմամբ, սոցիալական,
աշխատանքային մոտիվներ...):

ժ) Յերգիծական յերգեր. Յերգիծական յերգերի տեսակները
(հուժորիստական, սատիրական): Յերգիծական յերգերի բովան-

դակութունը (ժող. կենցաղ, աշխատանքային կյանք, անհա-
տական պակասություններ, սոցիալական մոտիվներ, այլ և այլ
մոտիվներ):

ՀԱՅ ԺՈՂ. ՅԵՐԳԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ժողովրդական յերգերի լեզուն, վոճը (ժող. դարձվածքներ,
անեծքներ և որհնանքներ, նզովական, փաղաքշական բառեր,
մակդիրներն ու ածականներ: Ժողովրդական յերգերի գեղար-
վեստական պատկերները, հոգեբանական զուգահեռականություն,
խոսքի յերաժշտականությունը (հանդիտություն), տաղաչափա-
կան կառուցվածքը և այլն):

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Բ Ն Ա Գ Ր Ե Ր

1. Ս. Հայկունի.— Ժողովրդական յերգ և այլն: Տես՝ «Եմինյան
ազգագրական ժողովածու», հատոր 2, հջ՝ 3—165:
2. Յե. Լալայան.— Զավախքի բուրմունք, Թիֆլիս, 1892 թ. հջ՝
18—41:
3. Հ. Ճանիկյան.— Հնությունք Ակնա, Թիֆլիս, 1895 թ. հջ՝
405—500:
4. Ա. Ղանալանյան.— Հայ շինականի աշխատանքի յերգերը՝
Յերևան, 1937 թ.:

Ե

ՄԱՆՐ-ԵՊԻԿԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) Ժողովրդական առածներ և ասացվածքներ.— Առած-ասաց-
վածքները կարևոր տեղը հայ ժողովրդական բանասրուստության
եպիկական ստեղծագործությունների շարքում: Հայ ժողովրդա-
կան առած-ասացվածքների տեսակները (զյուզացիական, արհես-
տավորական, փաճառական և այլն): Առած-ասացվածքների
աղբյուրները: Առած-ասացվածքների բովանդակութունը, (սոցիա-
լական անհավասարություն, աշխատավորության ծանր վիճակի
նկարագիր, աշխատանքային, հակակրոնական մոտիվներ, փրի-
ստիալություն, կենցաղ, հավատալիք, բարոյախոսություն և այլն):
Առած-ասացվածքների արտահայտչական միջոցները (հան-
դիտություն, գեղարվեստական պատկեր-համեմատություններ):

բ) Ժողովրդական հանելուկներ.—Հանելուկների տեղը հայ ժողովրդական բանահյուսության մանր-եպիկական ստեղծագործությունների շարքում: Հանելուկների թեմատիկան: Հին հավատալիքների, կենցաղի, սովորույթների արձագանքը հայ ժող. հանելուկներում: Հանելուկների մշակում-ստեղծումը մեր դրականության մեջ (Ն. Շնորհալի և այլն): Հանելուկների արտահայտչական միջոցները (հանգիստություն, մետաֆորներ և այլն):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բ Ն Ա Գ Ր Ե Ր

1. Ս. Հայկունի.—Ժող. յերգ, առած և այլն: Տես՝ «Եմինյան ազգ. ժող.», հատար 2, էջ՝ 167—196:
2. Գ. Սրվանձադյան.—Մանանա, 1876 թ. 4. Պոլիս, էջ՝ 314—323:
3. Տ. Վարդանյան.—Ժողովրդական անգիր բանաստեղծություններ, Թիֆլիս, 1901 թ. էջ՝ 63—73:

2.

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՖՈՒԿՆՈՐԸ

Հայկական խորհրդային ֆուկունը վերապես Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության շնորհիվ ազատագրված հայ ժողովրդի հույզերի, պայքարի ու նվաճումների գեղարվեստական արտահայտություն:

Հայկական խորհրդային ֆուկունը բովանդակությունը (գովք՝ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության, Խորհրդային իշխանության, քաղաքացիական կռիւների, կարմիր Բանակի, գովք՝ կուսակցության ու կառավարության առաջնորդների—Լենինի, Ստալինի, Կիրովի, Վորոշիլովի, Որջոնիկիձեյի, Միկոյանի: Գովք՝ սոցիալիստական շինարարության, կոլեկտիվիստական կյանքի, ստալանովական շարժման, Ստալինյան Մանամադրության, Խորհրդային հայրենիքի, կոմյերիամիություն, կոմունիստական, ժողովուրդների յեղբայրության: Ժողովրդի թշնամիների մերկացումը հայկական խորհրդային ֆուկունում):

Հայկական խորհրդային ֆուկունի ժանրերը.—1. Բնարական ստեղծագործություններ (ժող. յերգերի տարբեր տեսակներ):

2. Վերական յերկեր (վեպ, վիպերգ, հեքիաթ, զրույց և այլն):
3. Մանր եպիկական ստեղծագործություններ (առած-ասացվածք, հանելուկ):
4. Գովերգ-ձոն (վերջինս իբրև բանաստեղծական նոր տեսակ հայկական խորհրդային ֆուկունում):

«Լենին փաշա» վիպերգը: Հոկտեմբերյան հեղափոխության, Լենինի, նրա վիճակների, քաղաքացիական պատերազմի հերոսականության բարձր գեղարվեստական նկարագիրը «Լենին փաշա» վիպերգում:

«Լենին փաշայի» գեղարվեստական մեծ արժանիքները (պաթոս, դրամատիզմ, ուժգնություն, պատկերավորություն և այլն): «Լենին փաշայի» կապը «Սասունցի Դավիթ» հետ: «Լենին փաշան» իբրև Լենինի մասին յեղած խորհրդային հարուստ ու զուսկ ֆուկունի լավագույն ստեղծագործություններից մեկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Լենինը հայկական ֆուկունում», Յերևան, 1933 թ.:
2. «Հայկական խորհրդային ֆուկունը», Յերևան, 1933 թ.:
6. «Ստալինը հայ ժողովրդի ստեղծագործության մեջ», Յերևան, 1939 թ., էջ՝ 163—191:

«Ազգային գրադարան»



NL0237680



Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

Handwritten title or section header, possibly a date or location.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.